ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ _____ «_____» _____ 2022 թ.

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի 19.10.2022թ. հ.Ն/31315-22 գրությունը.

1.Թույլատրել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ թանգարանին ամրացված, Երևան համայնքին անհատույց, անժամկետ օգտագործման հանձնված գույքի կազմից՝ թանգարանի հիմնական ֆոնդում ընդգրկված առարկաները, համաձայն հավելվածի, ժամանակավոր (մինչև 2023 թվականի մարտի 1-ը) ի պահ հանձնել «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին՝ վերականգնման և ամրակայման գործընթաց իրականացնելու նպատակով:

2. Լիազորել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի հետ կնքել պայմանագիր՝ ի պահ հանձնվող առարկաների տեղափոխման, պատշաճ պահպանման և հետ վերադարձման վերաբերյալ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Recoverable Signature

X 

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Երևանի քաղաքապետի

2022թ. նոյեմբերի -ի

հ. –Ա որոշման

ՑԱՆԿ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎՈՂ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

N	Հեղինակը և թանգարանային առարկան	Նյութը և տեխնիկան	Չափսերը /սմ/	Հաշվառանիշը
1	Պոդպոմոգով Վալենտին «Ռեքվիեմ», 1981թ.	կտավ, ստվարաթուղթ, յուղաներկ	110x216	ԵԺԱԹ-230
2	Գալստյան Վրույր «Մտորումներ» շարքից, «Թեմատիկ պատկեր» N9, 1981թ.	կտավ, յուղաներկ	100x80	ԵԺԱԹ-335/1
3	Հովհաննիսյան Աշոտ «Մայրություն», 1970-75թթ,	կտավ, յուղաներկ	132x71	ԵԺԱԹ -228
4	Գրիգորյան Գևորգ /Ջոտտո/ «Տաբիձեի դիմանկարը», 1951թ.	կտավ, յուղաներկ	54x47	ԵԺԱԹ -80
5	Գրիգորյան Գևորգ /Ջոտտո/ «Լուիզայի դիմանկարը», 1961թ.	կտավ, յուղաներկ	48,5x39,5	ԵԺԱԹ -79
6	Սեդրակյան Մկրտիչ «Նատյուրմորտ», 1973թ.	կտավ, յուղաներկ	79x99	ԵԺԱԹ -29
7	Գալստյան Վրույր «Ինքնադիմանկարով նատյուրմորտ», 1971թ.	կտավ, յուղաներկ	84x60	ԵԺԱԹ -69
8	Ժերանյան Խաչատուր /Ռիշար/ «Մերկը»-5, 1983թ.	թուղթ, գունավոր վիմագրություն	65x50	ԵԺԱԹ -777/2(5)
9	Ժերանյան Խաչատուր /Ռիշար/ «Մերկը»-4, 1983թ.	թուղթ, գունավոր վիմագրություն	65x50	ԵԺԱԹ -777/2(4)
10	Ժերանյան Խաչատուր /Ռիշար/ «Մերկը»-3, 1983թ.	թուղթ, գունավոր վիմագրություն	65x50	ԵԺԱԹ -777/2(3)

11	Ժերանյան Խաչատուր /Ռիշար/ «Մերկը»-1	թուղթ, գունավոր վիմագրություն	65x50	ԵԺԱՐ -777/2(1)

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ